

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Բանակի օրվա կապակցությամբ

27.01.2017



Միբելի հայրենակիցներ, շնորհավորում եմ բոլորիս Բանակի օրվա կապակցությամբ:

Հունվարի 28-ին մեր ժողովուրդը նշում է Հայաստանի Հանրապետության պետական տոնացույցի ամենանվիրական տոներից մեկը՝ Հայոց Բանակի օրը: Բանակի տոնն ամենքինս է, այն մտնում է յուրաքանչյուր հայկական ընտանիք, իր հետ բերելով պաշտպանված լինելու զգացողություն:

2017 թվականը մեր Բանակի համար հոբելյանական տարի է, քանզի բոլորում է Հայոց Բանակի կազմավորման 25-րդ տարեդարձը: Բանակի օր արտահայտությունը նվիրական զգացումներ ու հպարտություն է առաջացնում բոլորիս հոգիներում և պատասխանատվության է մղում յուրաքանչյուրիս՝ հարազատ զավակի նման պահել ու պահպանել Հայոց ազգային Բանակը:

Հայկական բանակը ծլարձակեց ազգային զարթոնքի՝ Արցախյան շարժման հիմքերում՝ կամավորական ջոկատների տեսքով, և Արցախի ազատագրման պայքարում կազմավորվեց որպես կանոնավոր բանակ: Հայկական բանակը մեր անկախ պետականության ամենակարևոր ձեռքբերումներից է: Այն ոչ միայն արժանիորեն կրում է Արցախյան ազատամարտի փառապանծ հաղթանակի դափնին, այլև հանդիսանում է մեր հայրենիքի խաղաղության ու անվտանգության, մեր երկրի պետական սահմանների անառիկության ապահովման անփոխարինելի երաշխավորը, վկան՝ 2016 թվականի Ապրիլյան քառօրյա պատերազմը և հակառակորդի սահմանային մշտական ոտնձգությունները զսպելու և համարժեք պատասխան տալու փաստը: Ցավոք հաղթանակները ձեռք են բերվել կորուստներով՝ մեր հերոս եղբայրների և քույրերի կյանքի գնով: Այս տոնական պահին բոլորիս խորին խոնարհումը նրանց հիշատակին:

Միբելիներս, այսօր էլ մեր զավակներին բանակ ենք ճանապարհում հաստատ համոզումով, որ Հայոց Բանակի շարքերը համալրելու գնացած նորակոչիկները շարունակելու են սահմանապահ զինվորների երախտագիտության արժանի գործը:

Հայոց բանակի սիրելի զինվորներ, պարոնայք սպաներ և հրամանատարներ, Ձեր գործը դժվար է ու խիստ պատասխանատու, բայցև պատվաբեր: Ամենից առաջ Ձեզ մաղթում եմ անվտանգ ծառայություն: Թող Ձեր արշավույսները միշտ խաղաղությամբ բացվեն:

Կրկին շնորհավոր տոնդ, հայ զինվոր: Շնորհավոր 25-ամյա տարեդարձդ, Հայոց հաղթանակած բանակ: Փառք ու պատիվ Ձեզ, Հայոց բանակի անհաղթ Արժիվներ: